

Analytical Bulletin of Armenian and Regional Studies
ISSN: 1829-4502
e-ISSN: 2953-8254
Journal homepage: https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/index

CENTER FOR CULTURE AND CIVILIZATION STUDIES FOUNDATION

Ferdinant Grigoryan
"The Role of The Al-Baqir Brigade in The Syrian Crisis. Research on Tribal Engagement"

To cite this article: Ferdinant Grigoryan. "The Role of The Al-Baqir Brigade in The Syrian Crisis. Research on Tribal Engagement." *Analytical Bulletin of Armenian and Regional Studies (CCCS)* 19 (2024): 25-58 DOI: 10.56673/18294502-fgt2024.19.2

To link to this article: **DOI:** 10.56673/18294502-fgt2024.19.2

Published online:

29 September

Submit your article to this journal

ՎՏՀՏ / ABARS
DOI 10.56673/18294502-fgt2024.19.2

ԱԼ-ԲԱՔԻՐ ԲՐԻԳԱԴԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ՑԵՂԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆերդինանտ Գրիգորյան[1]
Երևանի պետական համալսարան

Համառոտագիր
Սիրիական ճգնաժամի ընթացքում ստեղծված իրավիճակի արդյունքում Սիրիայի կառավարությունը մեծապես ապավինում է կիսառազմական խմբավորումներին՝ անվտանգության մարտահրավերներին դիմակայելու համար: Առկա ուսումնասիրությունները ենթադրում են, որ Սիրիայում բոլոր կիսառազմական խմբավորումները ձևավորվել են հիմնականում վերևից վար գործընթացով: Կենտրոնանալով Սիրիայում Ալ-Բաքիր բրիգադի հաջողության վրա՝ այս ուսումնասիրությունը վիճարկում է այդ ենթադրությունը: Հոդվածը ցույց է տալիս, որ ցեղային զինյալների ի հայտ գալը հիմնականում մասսայական երևույթ է, որը բխում է տեղական ռեսուրսների շուրջ մրցակցությունից: Այն պնդում է, որ սիրիական իշխանությունն օգտվել է այս հնարավորությունից և խմբավորմանը փոխանցել է իր անվտանգության և հակաապստամբության որոշ խնդիրներ:

ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվել է՝
2 փետրվարի 2024
Ընդունվել է՝
1 մայիսի 2024

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ՝
Սիրիա, ցեղեր, սիրիական ճգնաժամ, ցեղայնություն, կիսառազմական խմբեր, ցեղային զինյալներ, միլիցիաներ

DOI:
10.56673/18294502-fgt2024.19.2

Ներածություն

Սիրիայում տիրող իրավիճակից ելնելով, որը ձևավորվել է Սիրիական ճգնաժամի պատճառով (2011-մինչև մեր օրեր)՝

[1] Երևանի պետական համալսարան, էլ. փոստ grigoryan.ferdinant@gmail.com.

կառավարությունը սահմանային շրջաններում անվտանգության պահպանման խնդիրը փոխանցել է ցեղային զինյալներին: Այս հոդվածը քննարկում է, թե ինչպես և ինչու է սիրիական իշխանությունը հույսը դնում ցեղերի վրա անվտանգային մարտահրավերներին դիմակայելու համար, ինչպես նաև քննարկում է այս հարցից բխող մի շարք ենթահարցեր, այդ թվում՝ ինչ ազդեցություն կունենա դա ցեղային ներքին դինամիկայի վրա և որոնք են ցեղային կապերի ամրապնդման հետևանքները Սիրիայի ապագա կայունության համար:

Առկա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սիրիայում գրեթե բոլոր կիսառազմական խմբերը ձևավորվել են վերևից վար գործընթացով: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ պետությունը, ճգնաժամի ժամանակ հրաժարվելով բռնության մենաշնորհից, այն կիսում է ուրիշ ուժերի հետ և մասնավորապես այն տարածքներում, որտեղ պետական վերահսկողությունը թույլ է կամ բացակայում է: Օրինակ, Արիել Ահրամի «Պրոքսի զինվորներ. Պետության կողմից հովանավորվող զինյալների վերելքն ու անկումը» (Proxy Warriors The Rise and Fall of State-Sponsored Militias) աշխատանքը նկարագրում է քաղաքացիական պատերազմների ու ճգնաժամերի ժամանակ պետությունների և ոչ պետական դերակատարների միջև համագործակցության օրինաչափությունները՝ նման գործունեությունն անվանելով պարահինստիտուցիոնալ բռնություն (la violencia parainstitucional):[2] Ուսումնասիրությանը ընդգրկում է Լատինական Ամերիկայի, Իրաքի, Իրանի և Ինդոնեզիայի դեպքերը:

Առկա ուսումնասիրություններից մեկն է նաև Հայան Դուխանի «Պետություն և ցեղեր Սիրիայում. Ոչ ֆորմալ դաշինքներ և հակամարտությունների ձևեր» աշխատանքը, որում

[2] Ahram, Ariel. Proxy Warriors: The Rise and Fall of State-Sponsored Militias (Stanford University Press, 2011) https://nx.ax/7Mt.

ներկայացվում է ցեղերի և ցեղային համակարգերի դերը Սիրիայի պատմության մեջ՝ ներկայացնելով պետության և ցեղերի փոխհարաբերությունների վերաբերյալ ներկայիս ճգնաժամի կարևոր, բայց անտեսված առանցքը:[3] Կենտրոնանալով Սիրիայում ալ-Բաքիր բրիգադի հաջողության և ալ-Բաքքարա ցեղի վրա՝ հոդվածը պնդում է, որ ցեղային այս զինյալների ի հայտ գալը հիմնականում զանգվածային երևույթ է, որը բխում է տեղական ռեսուրսների շուրջ մրցակցությունից: Այն նաև պնդում է, որ Սիրիայի իշխանությունը օգտվել է այս հնարավորությունից և խմբավորմանը փոխանցել է անվտանգության և հակաապստամբության որոշ լիազորություններ:

Այս ամենից հարց է առաջանում, թե ինչու է պետությունը հրաժարվում բռնության մենաշնորհից՝ ցեղերին տալով մի շարք լիազորություններ և ստեղծելով «պետություն պետության մեջ»: Ահրամը ենթադրում է, որ նպատակը հաճախ ցեղերից ծառայություններ ստանալն է՝ նրանց ծառայեցնելով, Օլսոնի ձևակերպմամբ, որպես «ստացիոնար ավազակներ»:[4] Ցեղերի վրա հենվելը թույլ է տալիս պետությանը արագ և արդյունավետ արձագանքել տեղական մարտահրավերներին, հատկապես երբ այն պայքարում է լավ կազմակերպված ապստամբությունների դեմ:[5] *Ասաբիյա*-ն (Asabiya)՝ ցեղային հարազատական կապերը, կարևոր դեր է խաղացելզինված խմբավորումներում ցեղայինների հավաքագրման գործում: Տեղական նշանավոր դերակատարները հաճախ են դիմել ցեղային պատկանելության գաղափարին իրենց նպատակներն իրականացնելու համար: Չնայած դրան՝ ներքին

[3] Dukhan H., State and Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns (Oxfordshire: Routledge, 2018).
[4] Ahram, Ariel. Proxy Warriors: The Rise and Fall of State-Sponsored Militias (Stanford University Press, 2011) https://nx.ax/7Mt.
[5] Clayton, Govinda, and Andrew Thomson, Civilianizing Civil Conflict: Civilian Defense Militias and the Logic of Violence in Intra-State Conflict (International Studies Quarterly, 2016).

տարբերությունները, սոցիալական և աշխարհագրական ցրվածությունը և վիճարկվող ղեկավարությունը հակասում են ցեղերի՝ իբրև համախմբված խմբերի պատկերին:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ալ-Բաքքարա ցեղը ներքնապես պառակտված է, և դրա առանձին տոհմերի միջև խմբակային մրցակցությունն ու հակամարտությունները խորը արմատներ ունեն են: Ավանդական առաջնորդները կողք կողքի էին, սակայն Ալ-Բաքիր բրիգադի նոր ղեկավար Խալեդ ալ-Հուսեյնը խաթարեց այս ներքին համերաշխությունը:

Այս հանգամանքը կարող է լուրջ հետևանքներ ունենալ Սիրիայի համար: Ֆալեհ Աբդուլ Ջաբարը նախազգուշացրել է, որ ռազմական նպատակներով ցեղերին ապավինելը կարող է ապագայում դառնալ «Ֆրանկենշտայնի նման» էվոլյուցիա:[6] Սա հենց այն է, ինչ տեղի է ունենում Սիրիայում, որտեղ ցեղային ավանդույթները, ինչպիսիք են հարազատական կապերը ('asabiyya), տարածքայինությունը և ցեղային գործելակերպերը՝ վրեժը (tha'r) և քաղաքացիական անձանց տարհանումը իրենց տներից, վերակազմավորվել և տեղափոխվել են ժամանակակից ռազմական մարտերի համատեքստ: Հաճախ այս վարքագիծը խրախուսում է այն, ինչ Ջաբարն անվանում է «ցեղային գանգստերիզմ»՝ վնասելով ազգային միասնությանը և պետական ամբողջականությանը:[7]

Հոդվածի նպատակն է Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում ցեղերի և ցեղային համակարգի վերաբերյալ լայն գրականության վերանայումը՝ ներառյալ ցեղերի կառուցվածքի և գործառույթների վերաբերյալ դիսկուրսի վերլուծությունը: Այն լրացվեց առկա գրականության հետագա վերանայմամբ՝ հակամարտության ժամանակ «կիսառազմական խմբերի»

[6] Abdul-Jabar, Faleh. Shaykhs and Ideologues: Detribalization and Retribalization in Iraq, 1968-1998. (Middle East Report, 2000).
[7] Նույն տեղում:

նպատակների և «հետկոնֆլիկտային» միջավայրում պետություն-հասարակություն հարաբերությունների վրա դրանց ազդեցության վերաբերյալ: Այն բանից հետո, երբ լայն շրջանակը հաստատվեց, ես սկսեցի կենտրոնացված ուսումնասիրություն անցկացնել այս հետազոտության համար ընտրված դեպքի վերաբերյալ՝ Ալ-Բաքիր բրիգադի: Այս զինված խմբավորումը կամ միլիցիան (milishia) կառուցված է նախկինում գոյություն ունեցող սոցիալական ցանցի վրա, այն է՝ Ալ-Բաքքարա ցեղը: Հետևաբար, այս դեպքի ուսումնասիրությունը պահանջում է Ալ-Բաքքարա ցեղի կառուցվածքի, նրա աշխարհագրական բաշխվածության, առաջնորդության և կենտրոնական պետությունների հետ փոխգործակցության պատմության ուսումնասիրություն: Այն պահանջում է վերլուծություն ինչպես ազգային, այնպես էլ տեղական մակարդակով: Հաշվի առնելով ուսումնասիրության նպատակը և օբյեկտը՝ կիրառվել են նարատիվային և դիսկուրսիվ վերլուծական մեթոդները:

Ինչ վերաբերում է տվյալների հավաքագրմանը, ապա Ալ-Բաքիր բրիգադի ստեղծման վերաբերյալ տվյալներ ձեռք բերելու առումով հետազոտություններ եմ անցկացրել կառավարության, դոնորների և միջազգային կազմակերպությունների զեկույցներում Սիրիայում հակամարտության վերաբերյալ և հավաքել եմ տվյալների բազա: Հավաքագրված նյութը ներառում է 2011 թվականից՝ Սիրիական ճգնաժամից 2023 թվականի սեպտեմբերը՝ մինչև Ալ-Բաքքարա և մի շարք այլ ցեղերի առճակատումը քրդական ուժերի (ՍԱԲ) հետ ընկած ժամանակահատվածը: Օգտագործվել են նաև սոցիալական մեդիայի հարթակներում, ինչպիսիք են Facebook-ը, X-ը (Twitter-ը), YouTube-ը և Telegram-ը, հավաքագրված տվյալները, որոնցում կատարելով արաբերեն al-Baqqara, al-Baqqer, qabila, halab բանալի բառերով: Ինչ վերաբերում է Սիրիայում ցեղի կառուցվածքի, պատմության և տարածման

վերաբերյալ տվյալների ձեռքբերմանը, ուսումնասիրել եմ գրականության լայն շրջանակ: Սա ներառում էր Ալ-Բաքքարա ցեղի անդամների կողմից գրված ծագումնաբանական հանրագիտարաններ, սիրիացի պատմաբանների, օրինակ՝ Ջամալ ալ-Բարութի կողմից պատրաստված պատմությունները և զեկույցներ, որոնք արվել են ԱՄՆ տարբեր հաստատությունների համար՝ որպես Սիրիայում 2014 թվականից սկսած նրանց ռազմական ներկայության մաս:[8]

Ինչ վերաբերում է ցեղի ներքին տրամադրվածությունն ու դինամիկան հասկանալուն, ապա սրա համար անհրաժեշտ է դաշտային աշխատանք, որը իր դժվարության ու ռեսուրսների սղության պատճառով դառնում է անհնար: Այս իսկ պատճառով, օգտվել եմ Հայան Դուխանի՝ Ալ-Բաքքարա ցեղի անդամների հետ կատարած 25 հարցազրույցից, որը նա կատարել է 2017-2018 թվականները ընկած ժամանակահատվածում, իր «Պետություն և ցեղեր Սիրիայում. ոչ ֆորմալ դաշինքներ և հակամարտությունների ձևեր» գրքի համար:[9] Հարցվածների մեծամասնությունն ապրում էր Սիրիայում, բայց մի քանիսն ապրում էին նաև Թուրքիայի հարավում: Անշուշտ, ես գիտակցում եմ այն սահմանափակումները, որ ունի այս սկզբնաղբյուրը, սակայն դրանց մի մասը հաղթահարելու համար և սխալները բացառելու նպատակով ես այդ հարցազրույցներից վերցրել եմ միայն այն տեղեկությունները, որոնց ճշգրտությունը հնարավոր էր ստուգել լրատվամիջոցների և սոցիալական ցանցերում հրապարակումներում առկա տեղեկատվության միջոցով:

[8] Barut muhamad jamal, litakun altaarikhiu alhadith liljazirat alsuwriat: 'asyilatan washkaliaat altahawul min albudunat alaa aleumran alhadariu / muhamad jamal barutu (birut: almarkaz alearabia lil'abhath wadirasat alsiyasati, 2013).

[9] Dukhan H., State and Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns (Oxfordshire: Routledge, 2018).

Բռնության մենաշնորհի փոխանցումը պետությունից ցեղերին

Պատմության ընթացքում ցեղերը ստեղծել են զինված խմբեր, որպեսզի պաշտպանեն իրենց ապրուստի աղբյուրները՝ արոտավայրերը, ջրհորները և նախիրները, այլ ցեղերի սպառնալիքից, որոնք ցանկանում են իրենց վերահսկողության տակ վերցնել և ընդլայնել սեփական իշխանությունն ու ազդեցությունը: Սա սովորաբար տեղի է ունենում այն ժամանակներում, երբ ծայրամասերում պետական վերահսկողությունը, որոշակի պատճառներից ելնելով, բացակայում էր:[10] Ռեսուրսների համար մրցակցության այս շարունակական ցիկլի արդյունքում ստեղծվել է «քաղաքական կուտակման» համակարգ, ինչպես Բրենները նկարագրում է ցեղային արշավանքները, որոնք նպատակ ունեն մեծացնել իրենց ռեսուրսները կամ պաշտպանել իրենց ունեցածը:[11] Չնայած միջցեղային հակամարտությանը՝ ցեղերի ուժն ու հնարավորությունը ուղիղ համեմատական է տվյալ ժամանակում տվյալ տարածքում պետական վերահսկողության հետ: Այս պնդման լավագույն օրինակներից է Ֆադանի ղեկավար շեյխ իբն Միեյդի հետ կապված հետևյալ պատմությունը, որտեղ ատացոլված են պետության աճող հզորությունը և ցեղերի նվազող հզորությունը: Սուլեյման Խալաֆը պատմում է մեզ, թե ինչպես Իբն Միեյդը, հրապարակավ հավաքելով իր տարածաշրջանի բոլոր ցեղակիցներին,ասել է նրանց. «Այժմ ես չեմ կարող պաշտպանել որևէ մեկին»:[12]

---

[10] Jamie Allinson, The Struggle for the State in Jordan: The Social Origins of Alliances in the Middle East (Library of Middle East History, 2016) էստեղ գրեմ, վերաբերում է նաև մյուսներին, պետք է նշել կոնկրետ էջը/էջերը:

[11] Brenner, Robert, Agrarian Class Structure and Economic Development in Pre- Industrial Europe (Cambridge: Cambridge University Press, 1990).

[12] Khalaf, Sulayman, Family, Village and the Political Party: Articulation of Social Change in Contemporary Rural Syria (Berkeley: University of California, 1981) էջ 219:

Այս կռիվներում պետական իշխանությունը ոչ միայն տարածվում է ծայրամասերում, նաև իր վերահսկողությունն է պահում մարգինալցված հասարակություններում: Չնայած դրան, Սիրիայի, Իրաքի և Մերձավոր Արևելքի այլ մասերի կենտրոնական իշխանությունները շարունակում են հենվել ցեղերի առաջնորդների վրա՝ ցեղային վարձկանների հավաքագրելու համար՝ ներքին անկարգությունները ճնշելու և արտաքին սպառնալիքների դեմ պայքարելու համար:

Սիրիական իշխանությունը բազմաթիվ առիթներով բռնության իրավունքը փոխանցել է ցեղերին՝ ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար: 1979 թվականից սկսած սիրիական կառավարությունը պարբերաբար բախվում է ցույցերի, հարվածների և բռնության: Այս ցույցերը կազմակերպված էին «Մուսուլման եղբայրների» կողմից և կաթվածահար արեցին երկիրը[13]: Ջոնաթան Ռեյը նկարագրում է, թե ինչպես է Ջամիլ ալ-Ասադը՝ Հաֆեզի եղբայրը, 1981 թվականին այցելել Բուեյդար՝ ալ-Հադիդին ցեղի հենակետը:[14] Ջամիլը խնդրել է Ալ-Հադիդիինին «լինել կառավարության աչքերն ու ականջները» Համայի և Հալեպի գյուղերում և վերահսկել շարժումները երկու նահանգների միջև:[15] Ալ-Հադիդիինները ռազմական անցակետեր կառուցեցին Համայի շուրջը և դրա շնորհիվ գերի վերցրեցին «Մուսուլման եղբայրների» որոշ անդամների, որոնք ցանկանում էին Համայի ռմբակոծությունից հետո փախչել Իրաք՝ նրանց հանձնելով սիրիական ռեժիմին:[16]

[13] Drysdale, Alasdair, The Asad Regime and Its Troubles (MERIP Reports, 1982).
[14] Rae Jonathan, Tribe and Rangeland Management in Syria, PhD diss., (University of Oxford, 1999).
[15] Chatty, Dawn. The Bedouin in Contemporary. Syria: The Persistence of Tribal Authority (Middle East Institute, 2010).
[16] Dukhan H., The State and the Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns, (London: Routledge, 2019).

Ցեղերի և իշխանության մեջ համագործակցության մեկ այլ օրինակ է Ալ-Ջաբուր ցեղի և Իրաքի իշխանության միջև ձեռք բերված համաձայնությունը: 2004 թվականի մարտին Ալ-Հասաքա նահանգն ականատես եղավ Իրաքում ամերիկյան ներկայությամբ ոգևորված քրդական խռովությունների: Սիրիական բանակը ուժեղ ներկայություն չուներ երկրի արևելյան հատվածում, և օգնություն խնդրեց նահանգի արաբական ցեղերից:[17] Ալ-Ջաբուր ցեղը հզոր ներկայություն ունի Հասաքայում: Նրան վստահված էր կառավարական շենքերի պաշտպանությունը: Ցեղի ներկայացուցիչներին թույլ տրվեց զենք վերցնել, շրջապատել կառավարական շենքերը և պաշտպանել դրանք:[18] Իսկ շեյխ Մուհամմադ ալ-Ֆարեսի գլխավորած Տայ ցեղին վստահված էր պաշտպանել նահանգում գտնվող մյուս խոշոր քաղաքը՝ Կամիշլին:[19] Արդյունքում քրդական շարժումը ճնշվեց: Այս բախումների արդյունքում մոտ 40 մարդ սպանվել է, ավելի քան 100-ը վիրավորվել են, իսկ ավելի քան 2000 քուրդ բանտարկվել է:[20]

Այսպիսով, հաշվի առնելով վերը նշվածը՝ բռնության նկատմամբ պետական վերահսկողության փոխանցումը ցեղերին նորույթ չէ: Հոդվածն առաջ է քաշում այն վարկածը, որ ցեղերի վրա կախվածությունը ռազմական և անվտանգության նպատակներով նախկինում տեղի է ունեցել խիստ կենտրոնացված պայմանական ռազմական կառույցի ներքո, որտեղ պետությունը հավաքագրել է ցեղերին որպես ոչ պետական դերակատարներ՝ որպես այսպես կոչված «տիրակալի» վստահված անձինք: Հաճախ, երբ ճգնաժամն ավարտվում էր, պետությունը անմիջապես վերադառնում էր

[17] Savelsberg, Eva. The Syrian-Kurdish Movements: Obstacles Rather than Driving Forces for Democratization (Palgrave Macmillan, 2014).
[18] Savelsberg, Eva. The Syrian-Kurdish Movements: Obstacles Rather than Driving Forces for Democratization (Palgrave Macmillan, 2014).
[19] Նույն տեղում:
[20] Lowe, Robert. The Syrian Kurds: A People Discovered. (London: Chatham House, 2006)

բռնության մենաշնորհացման ճանապարհին: Սիրիական ճգնաժամից հետո կառավարող կառույցները չափազանց մասնատվեցին՝ դադարելով լինել վերը նկարագրված խիստ կենտրոնացված պետությունը: Սա հանգեցրեց բազմաթիվ տեղական դերակատարների և միջնորդների ի հայտ գալուն, որոնք հզորացել են ճգնաժամի ընթացքում և հեշտությամբ չեն հրաժարվի իրենց նորահայտ ինքնավարությունից:[21] Սա չի նշանակում, որ պետությունը քայքայվել է, բայց նրա կենտրոնական իշխանությունը, կարծես, մշտապես տրոհվել և ցրվել է, ինչը ներկայացնում է բռնության նկատմամբ պետության մենաշնորհից հիմնարար հրաժարում և շրջադարձ դեպի այն, ինչ Ռոբերտ Հոլդենն անվանում է ապավինում «պարահնստիտուցիոնալ բռնություն կիրառողներին»:[22]

Ռազմական ցեղայնությունը Սիրիայում հակամարտության ընթացքում

Երբ 2011 թվականին սկսված ճգնաժամի պատճառով Սիրիայում բողոքի ցույցեր սկսվեցին, ցեղայնությունը մեծ դեր խաղաց ցույցերից անհանգիստ շրջաններում՝ խրախուսելով երիտասարդներին մոբիլիզացվել որպես ռեժիմի դեմ բողոքի շարժման մաս: Երբ խաղաղ ցույցերը վերածվեցին դաժան առճակատման, որոշ ցեղերի ներկայացուցիչներ դիմեցին զինված ինքնապաշտպանության: Բողոքի ցույցերին մասնակցած շատ ցեղերի երիտասարդներ դիմեցին վրեժխնդրության սիրիական ռեժիմի անվտանգության ուժերի դեմ իրենց հարազատների սպանության կամ խոշտանգումների համար, որոնց պատճառը հաճախ վերջիններիս կողմից անօրինակ զենք կրելն էր

[21] Malmvig, Helle. Mosaics of Power: Fragmentation of the Syrian State since 2011. (DIIS Report, 2018).
[22] Holden, Robert H. Armies without Nations: Public Violence and State Formation in Central America, 1821-1960. (New York: Oxford University Press, 2004).

հանդիսացել: Սիրիական բանակը մեծ թվով ցեղային զինվորներ ուներ իր շարքերում: Նրանցից շատերը սկսեցին լքել բանակը 2011 թվականի վերջին՝ միանալով Սիրիական ազատ բանակին (ՍԱԲ): Ցեղային ծագում ունեցող շատ սպաներ սկսեցին բարձրանալ ՍԱԲ-ում: Նրանցից էին Մահեր ալ-Նուիմիրը Նուիմ ցեղից և Աբդուլ Ջաբբար Աքիդիդը Աքայդատ ցեղից:[23] Բանի Խալեդ ցեղի որոշ անդամներ ձևավորեցին զումարտակ, որը հայտնի է որպես «Վահանի բրիգադ»: Այն կռվում էր ՍԱԲ-ի հովանու ներքո Հոմսի Բաբա Ամր շրջանում:[24] Մավալի ցեղի մյուս անդամները ստեղծեցին ցեղային միլիցիաներ, որոնք միասին հայտնի են որպես Մավալի բրիգադ: Այն կռվել է Իդլիբում ՍԱԲ-ի դրոշի ներքո:[25]

Մյուս կողմից, հավատարիմ շեյխերը ստեղծեցին աշխարհազորայիններ և մոբիլիզացրին իրենց երիտասարդներին՝ կռվելու սիրիական ռեժիմի ուժերի կողքին: Օրինակ, Տայ ցեղի շեյխ Մոհամմադ ալ-Ֆարեսը, որը Սիրիայի խորհրդարանի անդամ էր, հիմնեց Ալ-Մաղավիր (քաջեր) կոչվող ցեղային միլիցիան Ալ-Հասաքեում:[26] Բանի Էզ ցեղի շեյխ Ահմադ Դարվիշը, որը նաև Սիրիայի խորհրդարանի անդամ էր, Իդլիբում իր ցեղայիններից ստեղծեց ռեժիմին կողմնակից զինյալների մեկ այլ բրիգադ: Որոշ դեպքերում նույն ցեղից կային երկու հակամարտող ցեղային աշխարհազորայիններ, որոնցից մեկը սատարում էր ռեժիմին, մյուսը՝ պայքարում նրա դեմ: Ցեղային որոշ երիտասարդներ ստեղծեցին զինյալների իրենց խմբերը՝ տալով դրանց իրենց ցեղերի անունները: Միևնույն ժամանակ նրանց ավանդական առաջնորդները ստեղծում էին զինյալների մեկ այլ խումբ, որը

[23] Dukhan H., Tribes of Syria: Pieces on a Chessboard? (Hate Speech International, 2016) https://nw.ax/6Kp.
[24]Adam, Larson. Capitol Shield Brigade Captives Video, August 2012, https://sq.ax/2Lq.
[25] Shamee Forever. 'iidlib , 'iielan tshikl katibat min eashirat almuali, https://hq.ax/p3O.
[26] Dukhan Hayaan, Eamaar Alhamdi, shabakat alnufudh al'iiraniat almutanamiat bayn eashayir sharq suria (maehad washintan, 2021)] https://bit.ly/3uTwBQ5.

նույնպես օգտագործում էր ցեղի անունը, բայց կռվում էր ռեժիմի կողմից: 2012 թվականի վերջին Սիրիան հասավ մի փուլի, երբ ռեժիմը մի կողմից, իսկ Սիրիական ազատ բանակը մյուս կողմից ցեղերին օգտագործում էին որպես վստահված անձինք մեկը մյուսի դեմ: Թեև ցեղային աշխարհազորայինները շատացել են Սիրիական ճգնաժամի ժամանակ, չկա որևէ ուսումնասիրություն, որը քննարկի դրանց ձևավորման նրբությունները և ուժի հետևանքային դինամիկան:

Ալ-Բաքիր բրիգադը Հալեպում

Պետության կողմից զինյալներ ստեղծելու և աջակցելու դրդապատճառները, այնուամենայնիվ, տարբերվում են այն դինամիկայից, որը խթանում է համայնքի վրա հիմնված միլիցիայի ձևավորումն ու մոբիլիզացումը, որոնք օգնություն են ստանում պետական գործակալներից՝ նորակոչիկներին մոբիլիզացնելու համար:[27] Ալ-Բաքիր բրիգադի ձևավորման գործընթացը հասկանալու համար պետք է խորամուխ լինենք ալ-Բաքքարա ցեղի սոցիոլոգիական իրողությունների մեջ:

Հալեպի նահանգում գտնվող Ալ-Բաքքարա ցեղը Դեյր Զորում բնակվող համանուն ցեղային միության հիմնական ճյուղն է: Ցեղի այս հատվածը լքել է Դեյր Զորը 19-րդ դարում ցեղի անդամների միջև ծագած խնդիրների պատճառով և այդ ժամանակից ի վեր բնակություն է հաստատել Հալեպ քաղաքի արևելքում և հարավում գտնվող գյուղերում՝ Թուրքանում, Ալ-Ալամում, Բլաթում, Խալասում և այլն:[28] Հալեպում և Դեյր Զորում ցեղի երկու հատվածների միջև փոխադարձ այցելությունների շնորհիվ հարաբերությունները պահպանվել են, հատկապես կարևոր իրադարձությունների համար: Փոխադարձ այցելություններ են

[27] Jentzsch, Corinna Militias and the Dynamics of Civil Wars, PhD diss., (Yale University, 2014).
[28] Ahmad wasfi zakariaa eashayir alshaam (dimashq: dar alfikr 1945).

տեղի ունենում հարսանիքների ու հուղարկավորությունների ժամանակ, սակայն երկու հատվածներից յուրաքանչյուրը իրականում ձևավորվել է որպես առանձին միավոր:[29] Սիրիացի պատմաբան Ջամալ ալ-Բարութն ասում է, որ հարաբերությունները երկու հատվածների միջև դարձել են սոսկ խորհրդանշական:[30]

1960-ականներից սկսած Հալեպը, ինչպես և սիրիական մյուս քաղաքները, դեմոգրաֆիկ զանգվածային փոփոխություն ապրեց: Գյուղացիները մեծ հոսքով տեղափոխվում էին քաղաք պայմանավորված Հալեպի արդյունաբերական զարգացող հատվածի կողմից ստեղծված աշխատատեղերով:[31] Ալ-Բաքքարա ցեղի շատ անդամներ այլ ցեղերի կողքին, ինչպիսիք են Ասասնեհը, Բեյթ ալ-Բերին և ալ-Հաղիդիինը, տեղափոխվել են քաղաքի արևելյան մաս՝ Բաբ ալ-Նայրաբ և ալ-Մարջե թաղամասեր: Չնայած 1970-ականների, 1990-ականների և 2000-ականներիի շուկայական բարեփոխումները ձեռնտու էին Հալեպի առևտրային բուրժուազիային՝ Սիրիայի վարչակարգը նաև մշակել և հաճախ առաջնահերթություն է տվել գյուղական և ցեղային ծագում ունեցող մրցակից վերնախավերին՝ ներառելով նրանց իր սեփական մենաշնորհային տնտեսական ցանցերում:[32]

Այս գործընթացը ռեժիմին հավատարմության դիմաց ցեղերին հզորացնելու ավելի լայն ռազմավարության մի մասն էր: Ինչպես պնդում է Դուխանը, դա նաև միջոց էր գնելու նրանց աջակցությունը ավանդական սուննի բուրժուազիային հակակշռելու համար, որը

[29] Dukhan, H. State and Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns, (Abingdon: Routledge, 2019) Interview via WhatsApp with Abdol Mohsen Ali: one of the members of the al- Baggara tribe in Aleppo on the 22nd of May 2017.
[30] Barout, Mohammed J. The Last Decade in the History of Syria: The Theory of Deadlock and Reform." (Arab Centre for Research and Policy Studies, 2021).
[31] Pagani, Giovanni. Urban Conflicts and Multiple War Narratives: The Case of Aleppo. (Jadaliyya, 2016).
[32] Haddad, Bassam. The Formation and Development of Economic Networks in Syria: Implications for Economic and Fiscal Reforms, 1986–2000 (New York: Springer, 2004).

1982 թվականին աջակցել էր «Մուսուլման եղբայրների» գլխավորած ապստամբությանը:[33] Մինչ ապստամբությունը այս ցեղերի որոշ առաջներդներ՝ օրինակ Ալ-Բազզարա ցեղից Աքլ ալ-Համադենը և Ալ-Բերի կլանի Զեյնո ալ-Բերին, դարձել էին Սիրիայի խորհրդարանի անդամներ:[34] Դաժան մրցակցություն կար Ալ-Բաքքարայի, Բեյթ ալ-Բերրիի և Ասասնեի միջև՝ կապված խոշոր եղջերավոր անասունների, ծխախոտի և թմրանյութերի մաքսանենգ ճանապարհների շուրջ, ինչպես նաև պետությունից տնտեսական սուբսիդիաներ ստանալու համար, օրինակ՝ գյուղատնտեսական հողատարածքներ մշակելու իրավունքը:[35]

Երբ բռնկվեց սիրիական ապստամբությունը և բռնությունը ուժեղացավ, Ալ-Բաքքարան և Բեյթ ալ-Բերին դա տեսան որպես իրենց հավատարմությունը նախագահ Ասադին ապացուցելու հնարավորություն: Հալեպում հանցավոր խմբավորումները, որոնք կոչվում են ցեղային Շաբիհա, Ալ-Բաքքարայից, Բեյթ ալ-Բերրիից և Ասասնեից, օգնեցին ճնշել ցույցերը ապստամբության սկզբնական փուլում:[36] Միևնույն ժամանակ նույն ցեղերի որոշ անդամներ միացան ընդդիմությանը՝ կռվելով ռեժիմի դեմ: Լաշերը պնդում է, որ բռնությունը սոցիալական կառուցվածքում պառակտումներ է առաջացնում՝ հանգեցնելով խմբերի մասնատմանը, որոնք, ընդհակառակը, պետք է ապավինեին իրենց անդամների համերաշխությանը սպառնալիքներից պաշտպանվելու համար:[37] Արդյունքում Արևելյան Հալեպը դարձավ իշխանությանը հավատարիմ և ընդդիմադիր ուժերի միջև առճակատման մեծ

[33] Dukhan H., Tribes and Tribalism in the Syrian Uprising. (Syria Studies Journal, 2014).
[34] Rashid al-Haji Salih, aleashayir walthawrat alsuwriata, al'adwar walamakanat https://bit.ly/47WfHiD.
[35]Mansur Husayn, aleashayir fi halab walthawrat 1-2 (halab: jisr 2020), https://bit.ly/3TqjVKO.
[36] Lund, Aron. The Non-State Militant Landscape in Syria. (Combatting Terrorism Center, 2013).
[37] Lacher, Wolfram. Libya's Fragmentation: Structure and Process in Violent Conflict. (Bloomsbury, 2020).

տարածք: Այդ ուժերի միջցեղային ներկայացուցիչները մեծամասնություն էին կազմում: Ի վերջո, երբ ընդդիմությանը հաջողվեց գրավել Արևելյան Հալեպը, որտեղ ծագել են բազմաթիվ ցեղային Շաբիհաներ, հակամարտության դաժանությունը հասավ իր գագաթնակետին:[38] Ասասնե ցեղի որոշ անդամներ հարձակվեցին Խալեդի եղբոր Հուսեյն ալ-Մարիի տան վրա և մահապատժի ենթարկեցին նրան՝ իր ավագ որդու՝ Ալիի հետ միասին:[39] Այս սպանությունը հին արմատներ ունի և սկսում է դեռևս այն ժամանակից, երբ Հուսեյն ալ-Մարին մրցում էր Ասասնեի մյուս անդամների հետ Ջիբրինի անասնաբուծական շուկայի նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Բացի այդ, մինչև ապստամբությունը նա նախկինում նույնպես ներգրավված էր եղել բազմաթիվ վեճերի մեջ Ասասնեի այլ անդամների հետ:

Հուսեյն ալ-Մարիի որդիներից մեկին՝ Խալեդին, հաջողվեց փախչել Արևմտյան Հալեպ, որտեղ մի քանի ամիս անց նա հայտարարեց Ալ-Բաքիր բրիգադի ստեղծման մասին, որը պետք է կռվեր սիրիական բանակի կողքին Արևելյան Հալեպում:[40] Սիրիական ճգնաժամի ժամանակ տեղական համայնքները կարող էին ընտրել իրենց պաշտպանությունը պատերազմի ժամանակ բռնություններից՝ պետության հովանու ներքո զինված խմբավորումներ ստեղծելով, ինչը վերաբերում է Ալ-Բաքիր բրիգադին:[41]

---

[38] Նույն տեղում:

[39] Այս պատմությունը պատմել են Ալ-Բաքքարա ցեղի շատ անդամներ, որոնց հետ Դուխանը հարցազրույց է վերցրել իր հետազոտության համար: Mansur Husayn, aleashayir fi halab walthawrat 1-2 (halab: jisr 2020), https://bit.ly/3TqjVKO.

[40] Suriatna, almilishiat al'iiraniat fi suriatun..'aedaduha wa'amakin tawazueiha (suritana, 2020), https://our-syria.com/8487/.

[41] Blocq, Daniel S. The Grassroots Nature of Counterinsurgent Tribal Militia Formation: The Case of the Fertit in Southern Sudan, 1985–1989. (Journal of Eastern African Studies, 2014).

Ալ-Բաքիր բրիգադը մարտերում

Ի դեմս Ալ-Բաքիր բրիգադի՝ սիրիական իշխանությունը գտել էր պատրաստի զորախումբ, որը կարող էր օգտագործել իր հակառակորդների դեմ: Սա իշխանությանը թույլ տվեց ավելացնել իր թվաքանակն ու կրակի հզորությունը Հալեպի նահանգում ռազմական գործողությունների ժամանակ (2012-2016):

Սիրիական ընդդիմության հետ հակամարտության համատեքստում Ալ-Բաքիրի բրիգադը կատարել է բազմաթիվ առաջադրանքներ: Ակինսը պնդում է, որ պետությունները ներառում են տեղական ցեղերին իրենց հակաապստամբության ռազմավարության մեջ, քանի որ նրանք տիրապետում են կոնֆլիկտային միջավայրի ավելի մեծ գիտելիքների, ինչը նրանց հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ լինել հակաապստամբության ժամանակ:[42] Իսկ Ալ-Բաքիր բրիգադի անդամները մոտիկից ծանոթ էին Հալեպի և նրա գյուղերի տեղանքին և իրենց համայնքի սոցիալական կազմին: Ինչպես Ակինսը նշում է իր աշխատանքում, «Մեքքայի բնակիչները գիտեն արահետները»: Նա պնդում է, որ տեղի ցեղերը լավագույնս գիտեն իրենց տարածքը, և այդ պատճառով նրանք հաջողվեց սիրիական բանակին ուղղորդել դեպի սիրիական ընդդիմության ակտիվ գոտիներ Հալեպի գյուղական շրջաններում:[43] Երկրորդ, Ալ-Բաքքարա ցեղը ներկայացնում էր «մոբիլիզացիայի համար հարմար և օրգանական սոցիալական կառուցվածք»:[44] Հետևաբար, Ալ-Բաքիր բրիգադը մոբիլիզացիայի կարևոր ռեսուրս էր, որը սիրիական բանակի կողմից օգտագործվում էր Հալեպում սիրիական ընդդիմության դեմ իր տեղական ջանքերն առաջ մղելու

[42] Akins, Harrison. Tribal Militias and Political Legitimacy in British India and Pakistan. (Asian Security, 2020).
[43] Նույն տեղում:
[44] Alwan, Fajir J. The Tribal Power in Contemporary Iraq: A Sociological Analysis. (Journal of College of Education for Women, 2020).

համար: Երրորդ, այս հետազոտությունը ցույց է տալիս, որ սիրիական իշխանությունը հենվում է ցեղերի վրա՝ ելնելով ոչ միայն գործնական անհրաժեշտությունից՝ պայմանավորված կառավարության սահմանափակ պետական կարողություններով,, այլ նաև ռազմավարական առումով՝ նպատակային բնակչության շրջանում պետական լեգիտիմություն կառուցելու համար: Ըստ այս ընկալման՝ պետությունը ընկալվում է որպես աղանդավորական խմբի (ալավիներ) կողմից կառավարվող, որը ցանկանում են ճնշել սուննի մեծամասնությանը: Աջակցելով սուննի ցեղային զինյալներին՝ այդ թվում նաև Ալ-Բաքիր բրիգադին ընդդիմության դեմ պատերազմում՝ սիրիական կառավարությունը նպատակ ունի թուլացնել կոնֆեսիոնալ լարվածությունը և լեգիտիմացնել իր ռազմական գործունեությունը Սիրիայի այն շրջաններում, որտեղ սուննիները մեծամասնություն են կազմում:

Սիրիական իշխանության կողմից Ալ-Բաքքարայի Ալ-Բաքիր բրիգադի վրա հույս դնելու հիմնական հիմնավորումն այն է, որ պատերազմի և տնտեսական ճգնաժամի պատճառով պետությունը թուլացել է և ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները խաղաղության և կարգի պահպանման հարցում: Դասալքությունը, մարտերում կորուստները, քաղաքացիական պատերազմի մարտահրավերները և ընդդիմության կողմից Հալեպի արևելքում մղվող քայքայիչ պատերազմը զգալիորեն սպառել են կռվելու ընդունակ տղամարդկանց թիվը:[45] Ցածր ինտենսիվության պատերազմներում ցեղային զինյալների տեղակայումն ավելի էժան է, քան մշտական բանակ պահելը: Արագորեն դառնալով ռեժիմի կողմնակից մոբիլիզացիայի ձևանմուշ՝ Ալ-Բաքիր բրիգադը, ինչպես մյուս ցեղային զինյալները, տարածվեց ամբողջ երկրում՝ սկզբնական փուլում ստեղծեցին անցակետեր, վերահսկելու զենքի

[45] The Carter Center. Syria Pro-Government Paramilitary Forces. (The Carter Center,2013) https://wx.ax/1Ih.

և մարդկանց տեղաշարժը, հետո սկսեցին խուզարկել ակտիվիստների և ընդդիմադիր գործիչների տները և անվտանգության ապարատներին տեղեկատվություն տրամադրել:[46]

Երբ 2014 թվականի մարտին հակամարտությունը Հալեպում սրվեց, և կառավարական ուժերը հայտնվեցին ընդդիմության մեծ մասի կրակահերթերի տակ, Ալ-Բաքիր բրիգադը՝ իր ամբողջ մարտական հանդերձանքով, կազմակերպվեց իբր միացյալ միավորում՝ գործելով սիրիական բանակի հրամանատարության ներքո և պայքարելով ընդդիմությունն դեմ Արևելյան Հալեպում:[47] Բիբերմանը պնդում է, որ ճգնաժամի ժամանակ կառավարության և ոչ պետական խմբերի միջև դաշինքները որոշվում են շահերի և իշխանության հավասարակշռությամբ:[48] Կառավարությունները հենվում են կառավարամետ զինյալների վրա, երբ իշխանության և ապստամբ խմբերի միջև ուժերի տեղական հավասարակշռությունը ապստամբների օգտին է կամ մոտավորապես հավասար է, իսկ ոչ պետական խմբերի շահերը սպասարկվում են կառավարության հետ դաշինքով: 2014 թվականի մարտից մինչև 2016 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում Ալ-Բաքիր բրիգադը տվել է 246 «նահատակ»:[49] Բազմաթիվ «նահատակների» մասին այս պնդումը, որը հայտարարվել է սոցիալական ցանցերում նրանց մասին պաստառների ցուցադրմամբ, շատ ավելի մեծ է, քան Ասադամետ այլ զինյալների կողմից հայտարարվածները, ինչը ցույց

[46] Leenders, Reinoud, and Antonio Giustozzi. Outsourcing State Violence: The National Defence Force, ‘Stateness’ and Regime Resilience in the Syrian War. (Mediterranean Politics, 2017).
[47] Նույն տեղում:
[48] Biberman, Yelena. Gambling with Violence. (Oxford: Oxford University Press, 2019.)
[49] al-Tamimi, Aymenn J. The Local Defence Forces: Regime Auxiliary Forces in Aleppo. (Syria Comment, 2016), https://jx.ax/q6B.

է տալիս նրա ռազմական մասնակցության մեծ ծավալը մարտերում:

Կարևոր է նշել, որ սիրիական իշխանության կողմից ցեղերի կողմից աջակցություն ցուցաբերելը նաև փորձ է ներկայացնում հակազդելու ընդդիմության ջանքերին, որոնք կարող են նմանապես հավաքագրել ցեղերը իրենց օգտին: Սիրիական ապստամբության սկզբից ի վեր սիրիական ընդդիմությունը օգտագործել է ցեղային կապերը՝ մոբիլիզացնելու և ուղղորդելու ցեղերի խաղաղ և զինված գործունեությունը վարչակարգի հետ պայքարում նրանց շահերն առաջ մղելու համար: Թոմսոնը պնդում է, որ ապստամբները հաճախ օգտագործում են ինքնության վրա հիմնված ճեղքերը կամ քաղաքականացնում են էթնիկ պատկանելությունը հավաքագրման, մարտավարական և քաղաքական նպատակների համար:[50] Ալ-Բաքիր բրիգադը կոչ է արել ցեղակիցներին, որոնք միացել են զինված ընդդիմությանը վայր դնել զենքերը, հանձնվել և միանալ ռեժիմին: Այսպիսով, ցեղերի հետ պետական կապը պարտադիր չէ, որ դիտարկվի ռազմական տեսանկյունից: Փոխարենը այն պետք է դիտարկվի որպես համայնքի իրազեկման ձև, որն օգտագործվում է բարոյական առումով ընդդիմությանը թուլացնելու համար: Ինչ-որ իմաստով դա նպաստեց ապստամբներին տեղական աջակցությունը վերացնելու պետության քաղաքականությանը՝ հարկադրանքի և համագործակցության համակցության միջոցով: Հավատարիմ ցեղային զինյալներին խնդրելը ներթափանցել ընդդիմադիր համայնքներ պետության համար միջոց էր հակառակորդ կողմից դասալքված տեղացի մարտիկներին հավաքագրելու համար:

[50] Thomson, Andrew. Ethnic Conflict and Militias. (New York: Palgrave Macmillan, 2013) https://wx.ax/6Tb.

Ցեղայնության վերակազմավորում և ցեղերի մասնատում

Ալ-Բաքիր բրիգադի ձևավորումը հանգեցրեց ցեղային զգացմունքների, պրակտիկայի և արժեքների վերակազմակերպման, որոնց ներքո կարելի է հստակ տեսնել ցեղային իշխանության ավանդական ձևերի և հին ցեղային հավատարմության քայքայման առանձնահատկությունները: Արդյունքը եղավ նոր խմբի ի հայտ գալը, որը պահպանում է որոշակի ցեղային առանձնահատկություններ, բայց որոնք նաև խիստ պայմանավորված և ձևավորված են այլ գործոններով, ինչպիսիք են տնտեսությունը, աշխարհագրությունը և դաշինքները ներքին և արտաքին ուժերի հետ: Ալ-Բաքիր բրիգադի ղեկավարները կարծում են, որ ցեղային արժեքներն ու գործելակերպը հնարավոր մոդելներ են հավաքագրման և մարտական ոգու բարձրացման համար, ինչպես նաև՝ իրենց ռազմական և անվտանգության նպատակներին հասնելու միջոց: Ալ-Բաքիր բրիգադի շատ առաջնորդներ խոսում են մի տարածքի մասին, որը նշվում է Ալ-Բաքքարա ցեղի կնիքով, որը կոչվում է «Խաթ ալ-Բաքքարա», ինչպես արտահայտված է Դեյր Զորում Ալ-Բաքիրի առաջնորդներից մեկի Ֆադի ալ-Աֆիսի հետևյալ խոսքերում. «Մենք թույլ չենք տա, որ քրդերը տիրեն «Խաթ ալ-Բաքքարային», և մենք կգրավենք այս շրջանը և կվերցնենք այն քրդերից, ովքեր սպանում են մեր տղամարդկանց և բռնաբարում մեր կանանց»:[51]

Մեկ այլ վերակազմակերպված ցեղային սովորույթ, որը կապված է ցեղային զինյալների աճի հետ, Ջալվայի պրակտիկան է, որը ցեղային հակամարտությունների հետ կապված հարկադիր տարհանման ձև է: Այն սկսեց կիրառվել երկրի տարբեր մասերում՝ փոխարինելով պետության բացակայող օրենքը: Դա տեղի է ունեցել

[51] Deirezzor24, “fadi aleafis” yaeud lilsaahat alsiyasiat bidiralzur (2021) https://bit.ly/477c5ch.

2015 թվականին, երբ Ալ-Բաքիր բրիգադի ղեկավարը խնդրել է Ասասնե ցեղերի անդամներին, որոնք կապված են իր հոր սպանողների հետ, լքել գյուղը այն բանից հետո, երբ այն գրավվել էր սիրիական բանակի և նրան հավատարիմ խմբերի կողմից։[52]

Այս աշխարհազորայինների ձևավորման ժամանակ կարելի է դիտարկել ենթացեղախմբային համերաշխությունների աճը, որտեղ մեկ կամ Ալ-Բաքքարայի դեպքում երկու տոհմ կազմում են այս ռազմական զինյալների կորիզը: Ավելի լայն ցեղային պատկանելություններն օգտագործվում էին միայն գործարքային՝ հաճախ անցողիկ ձևերով։[53] Ալ-Բաքիր բրիգադի դեպքում Խալեդ ալ-Հուսեյնը՝ միլիցիայի ղեկավարը, հավաքագրեց անդամների մեծամասամբ իր տոհմից, օրինակ Աբու Ռահմանից, ով հայտնի դարձավ որպես Ալ-Բաքքարա ցեղի ռազմական թև։[54] Սիրիայում ճգնաժամից առաջ Հալեպում Ալ-Բաքքարա ցեղի ամենաազդեցիկ տոհմը Աբու Ֆադելն էր, որը հիմնված էր Թուրքան գյուղում: Աբու Ռահմանի վերելքը Ալ-Բաքիր բրիգադի միջոցով վտանգեց նրանց դիրքերը սիրիական իշխանության մոտ: Այդ պաշտոնը զբաղեցնելու համար նրանք օգտագործեցին իրենց մայրական կապերը Խալեդ ալ-Հուսեյնի հետ՝ դառնալով Ալ-Բաքիր բրիգադի ակտիվ անդամներ՝ այս աշխարհազորայինը մեծապես վստահելով Աբու Ռահմանից և Աբու Ֆադելի անդամներին[55]: Թիբին պնդում է, որ հաճախ այն, ինչ ընկալվում է որպես «փաստացի» ազգակցական հարաբերություններ (հիմնված ծագման սկզբունքների և ամուսնության կամ որդեգրման միջոցով պատկանելության վրա)

[52] Alquds, “liwa' albaqi” almuali li'iiran yanshur altashayue wyjnnid atfalaan fi sufufih fi halab alsuwri (2020) https://bit.ly/473ekxo.
[53] Mazur, Kevin. “Dayr al-Zur from Revolution to ISIS: Local Networks, Hybrid Identities, and Outside.” In Syria: Borders, Boundaries, and the State, (Basingstoke: Palgrave Macmillan, 2020).
[54] Asl qabilat albaqara suhuf aliansab alhashimiati, (2016), https://sq.ax/2Cu.
[55] Նույն տեղում:

էմպիրիկորեն ակնհայտ է ցեղի փոքր միավորների ներսում, դրանք կոչվում են տեղական տոհմեր:[56] Ալ-Բաքքարա ցեղը ինքնության և զգացմունքային կապվածության աղբյուր է, ինչը խորհրդանշորեն կարևոր է: Ալ-Բաքիր բրիգադի լրատվամիջոցների կողմից արտադրված շատ տեսանյութերում, որոնք կոչվում են Շեյլա (ցեղային երգեր), կատարողները փառաբանում են Ալ-Բաքքարա ցեղի ռազմական կարողությունները և կոչ են անում իրենց անդամներին պաշտպանել ցեղի տարածքը:[57] Այստեղ ցեղը կոլեկտիվ է, որը կարող է ակտիվացվել որոշակի առաջադրանքի համար:[58]

Նույնիսկ այս փոքր համերաշխ խմբերում կան բազմաթիվ ապացույցներ, որոնք վկայում են այն մասին, որ մասնատվածությունը հաճախ նաև հատում է տոհմերը: Լաշերը պնդում է, որ քաղաքացիական պատերազմներում ռազմավարական պայմաններն անընդհատ փոխվում են՝ ստիպելով դերակատարներին վերադիրքավորվել և մտնել նոր դաշինքների ու թշնամությունների մեջ՝ թողնելով երկարատև հետքեր սոցիալական հյուսվածքի ներսում խզումների տեսքով:[59]

Ռազմական ցեղայնության ազդեցությունը ներցեղային քաղաքականության վրա

Ալ-Բաքքարա ցեղի ներսում դաշինքները կարող են առավելություններ բերել սիրիական իշխանությանը, սակայն Հալեպի ցեղերի հարաբերությունները հղի են լարվածությամբ և ռազմական առճակատմամբ: Ալ-Բաքիր բրիգադի ստեղծումը

[56] Tibi, Bassam. The Simultaneity of the Unsimultaneous: Old Tribes and Imposed Nation-States in the Modern Middle East. (London: Tauris, 1991).
[57] Fahd al-Eisii, dabaabatan watayaarat ahjum yal bikarat tasmim fahd albashaar (2019), https://gx.ax/2Wl.
[58] Khoury, Philip, and Joseph Kostiner. Introduction: Tribes and the Complexities of State Formation in the Middle East. (London: Tauris, 1991).
[59] Նույն տեղում:

հանգեցրեց սոցիալական հեռավորության, ճեղքվածքի, մրցակցության և տարածաշրջանի ցեղերի և կլանների միջև հակամարտությունների կտրուկ աճի: Ալ-Բաքիր բրիգադի ղեկավարներն օգտագործում էին իրենց զինյալներին և՛ որպես վերահսկողության գործիք, և՛ որպես միջոց՝ հաստատելու իրենց իշխանությունը այլ ցեղերի վրա իրենց տարածքում և նույնիսկ իրենց բնակավայրից դուրս: Ալ-Բաքիր բրիգադը փորձել է իշխել Հալեպի ցեղերի վրա քաղաքում և հարակից գյուղերում:[60] 2018 թվականին Ալ-Բաքիր բրիգադը կազմակերպեց համաժողով Հալեպի արևելյան հատվածում, որին հրավիրել է այլ ցեղերի ներկայացուցիչներ, ինչպիսիք են Ալ-Բերրին, Ալ-Հադիդիինը և Ասասնեն:[61] Համաժողովը իրենից ներկայացնում էր Ալ-Բաքքարա ցեղի գերիշխանության ճանաչումը տարածաշրջանի այլ ցեղերի նկատմամբ: Այս գերիշխանությունը երկար չտևեց, քանի որ այլ ցեղեր, ինչպիսիք են Ալ-Բերին, աջակցություն էին փնտրում արտաքին հովանավորներից, այս դեպքում՝ ռուսներից՝ մրցակցելով Ալ-Բաքքարա ցեղի հետ:[62]

Հետևաբար, ցեղային խմբերի ցանկությունը՝ արտոնություններ փնտրել իրենց զինյալներից մասնավոր հաշիվները լուծելու համար, հանգեցնում է մի իրավիճակի, երբ հակառակորդ կլանները փորձում են ստեղծել իրենց զինյալներին և օրինականացնել նրանց պետության միջոցով՝ հավասարեցնելու համար խաղադաշտը:[63] Ալ-Բաքիր բրիգադը ոչ միայն փորձում է իր գերիշխանությունը պարտադրել Հալեպի ցեղերի վրա, այլև փորձել

[60] Hassan, Mohammed. Arab Tribes in al-Hasakah and Deir ez-Zor Choose Their Allies. (Chatham House, 2020). https://wx.ax/4Fp.
[61] Khalid alkhatib, halab:kif 'asbah "liwa' albaqir" hajar eathrat biwajh alruws? (2019 almudni), https://bit.ly/3RtTt0g.
[62] Alhura, laysat faghnar faqut.. limadha 'ansha'at rusia easharat alsharikat aleaskariat alkhasati? (2023), https://arbne.ws/3uZRM32.
[63] Peic, Goran. Divide and Co-Opt: Private Agendas, Tribal Groups, and Militia Formation in Counterinsurgency Wars. (Studies in Conflict & Terrorism, 2019).

է վերականգնել ազգակցական կապերը Ալ-Բաքքարա ցեղի անդամների հետ՝ այնտեղ նույնպես բազա ստեղծելու համար: Դավուդը պնդում է, որ քաղաքական խաղում ներգրավված ցեղերի կենսունակությունը մեծանում է նրանց գործունեության սկզբնական շրջանից դուրս:[64] Ալ-Բաքիրի բրիգադի ղեկավարներից մեկը Դուխանի հարցազրույցներում ասել է. «Հալեպում մեր հաղթանակից և 2017 թվականին շեյխ Նաուաֆ ալ-Բաշիրի՝ Սիրիա վերադառնալուց հետո մենք գնացինք այնտեղ մեր զարմիկներին այցելելու և պայմանավորվեցինք մասնաճյուղ բացել ալ-Բաշիրի համար: Ալ-Բաքիրի բրիգադ Դեյր Զորում էր, և ի սկզբանե ամեն ինչ լավ էր, բայց ավելի ուշ լարվածությունը սկսեց սրվել, քանի որ շեյխ Նաուաֆ ալ-Բաշիրը չցանկացավ հրամաններ ստանալ Հաջ Խալեդից: Շեյխ Նավաֆը և նրա հետևորդներն ասացին, որ իրենք ծառի գլխավոր գերանն են, իսկ մենք ընդամենը ճյուղ ենք, և որ մենք պետք է հետևենք նրա հրամաններին»:[65] Սա հանգեցրեց քաղաքական բևեռացման՝ ընդգրկելով Ալ-Բաքքարա ցեղը լիովին, որն այնուհետև արտացոլվեց Սիրիայի երկու հիմնական բլոկների տարածական դիրքում: Ալ-Շարկիին կամ արևելցիներ տերմինը վերաբերում էր Նավաֆ ալ-Բաշիրին և Ալ-Բաքքարա ցեղի այն հատվածին, որը գտնվում էր Դեյր Զորում:

Նրանք առաջացել են որպես հակառակորդ խմբավորում Գարբիինների կամ Ալ-Բաքքարա ցեղի արևմտյանների դեմ՝ Խալեդ ալ-Հուսեյնի գլխավորությամբ, գրավելով Սիրիայի արևմտյան մասը, մասնավորապես՝ Հալեպը: Այսպիսով, մենք տեսնում ենք Ալ-Բաքիր բրիգադի երկու տարբերակ, որոնցից յուրաքանչյուրը

[64] Dawood, Hosham. The ‘State-ization’ of the Tribe and the Tribalization of the State: The Case of Iraq.” In Tribes and Power: Nationalism and Ethnicity in the Middle East, edited by Faleh Abdul-Jabar and Hosham Dawood. (London: Saqi Books, 2003).

[65] Dukhan, H. State and Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns, (Abingdon: Routledge, 2019), An Interview via WhatsApp with Ali Hamadeen, One of the Leaders of Liwa al-Baqqer in May 2018.

կենտրոնացած է տարբեր ուժային բազայի շուրջ և ունի իր առանձին օրակարգը և աջակցող խորհրդանիշները: Ընդհանուր առմամբ, ցեղային աշխարհազորայինների ստեղծումը ոչ միայն վերակազմավորեց տեղական դինամիկան, այլև ստեղծեց նոր կարգեր, որոնց միջոցով այս զինյալները փորձում էին նոր համակարգեր պարտադրել այլ սոցիալական խմբերին հպատակեցնելու և մի խմբին հնարավորություն տալով վերահսկելու ձևավորվող կարգերը: Մյուս դերակատարները հակված են արձագանքելու տարբեր ձևերով, ինչը հանգեցնում է լարվածության և անկայունության հաջորդական ալիքների իրենց տեղական տարածքում:

Վերացեղայնացում և պետական ինստիտուտների կրճատում

Մարտահրավերներին դիմակայելու համար սիրիական կառավարության քաղաքականությունն ամրապնդել է ցեղայնության ուժը: Մազրուին սահմանում է «վերացեղայնացումը» որպես ազգայնականության անկումից բխող գործընթաց, որը, նրա պնդմամբ, առաջացնում է ցեղային կապերի և զգացումների վերածնունդ: Հակառակ թույլ պետության, որը կառչում է գոյատևմանը, այլ ոչ թե զարգացնելու մտահղացմանը՝ ցեղերի անդամները սկսում են մեկուսանալ ազգային քաղաքականությունից և արագ ադապտանալ տեղական իրադարձություններին: Արդյունքը ցեղայնության աճն է և ազգային պատկանելության անկումը:

Արևելյան Հալեպում ընդդիմությանը ջախջախելուց հետո Ալ-Բաքիր բրիգադը ընդդիմադիր գրոհայինների տների հետ վարվեց որպես ռազմական ավար՝ գրավելով դրանցից շատերը և դրանք օգտագործելով որպես իրենց զինյալների բնակավայրեր, կամ

զողացավ նրանց գույքը և վաճառեց այն սև շուկայում:[66] Շորթումները և կողոպուտը դարձան եկամտաբեր գործունեություն Ալ-Բաքիր բրիգադի համար, հատկապես Արևմտյան Հալեպում: Բազմաթիվ տեղեկություններ կային նաև այն մասին, որ քաղաքացիական անձինք, որոնք հայտնի էին որպես Հալեպում հարուստ վաճառականների երեխաներ, առևանգվել են ռազմական կետերից, և նրանց ծնողներից փրկագին է պահանջվել նրանց ազատ արձակելու համար: Բազմաթիվ վաճառականներ ստիպված էին ամսական հարկեր վճարել Ալ-Բաքիր բրիգադին՝ Հալեպում իրենց առևտրական գործունեությունը վերսկսելու համար:

Ցեղերի ռազմական մոբիլիզացիան այնքան արմատացավ, որ որոշ կառավարական հաստատություններ սկսեցին լեգիտիմացնել այդ կազմավորումները: Ինտեգրվելով պետական համակարգում և կիսելով իշխանությունը նրանց հետ՝ նրանց հաջողվեց վերադարձնել ժառանգությանը, որը գրեթե անհետացել էր մինչ ճգնաժամի սրվելը:[67] Ինչպես Սիրիայի սոցիալ-ազգայնական կուսակցությունն օգտագործել էր իր ռազմական ներկայությունը Սիրիայում՝ քաղաքական ազդեցություն ստեղծելու համար՝ ի դեմս Սիրիայի վերջին խորհրդարանական ընտրությունների թեկնածուների, այնպես էլ Լիվա ալ-Բաքիրն առաջադրեց Օմար Հուսեյնին՝ Խալեդ ալ-Հուսեյնի եղբորորդին, որը իբր անկախ թեկնածու էր:[68] Ավելին, Ալ-Բաքիր բրիգադը ստանձնել է Հալեպ քաղաքի տրանսպորտային հատվածը, որտեղ միկրոավտոբուսների վարորդների մեծ մասը սերում են Ալ-Բու-

[66] Alquds, "liwa' albaqi" almuali li'iiran yanshur altashayue wyjnnid atfalaan fi sufufih fi halab alsuwri(2020), https://bit.ly/473ekxo.
[67] Boutaleb, Mohammad N. The Political Aspects of the Tribal Phenomenon in Arab Societies: A Sociological Approach to the Tunisian and Libyan Revolutions. (Arab Centre for Research & Policy Studies, 2012), https://gx.ax/n1R.
[68] al-Tamimi, Aymenn J. “The Local Defence Forces: Regime Auxiliary Forces in Aleppo.” (Syria Comment, 2016), https://wx.ax/g1G.

Ռհամա և Աբու-Ֆաղել տոհմերից, և բրիգադի անդամ են։[69] Տրանսպորտային ծառայությունները բաշխվում են Ալ-Բաքիրի աշխարհազորայինների միջև՝ համագործակցելով Ռազմական անվտանգության վարչության հետ։[70] Չնայած սիրիական կառավարության իմացությանը Ալ-Բաքիր բրիգադի ղեկավարների հանցավոր գործերի մասին, միևնույն է որոշում կայցրեցին համագործակցել նրանց հետ՝ հանուն ընդդիմության դեմ պայքարում կարճաժամկետ հաջողության հասնելու՝ անտեսելով նման ռազմավարության երկարաժամկետ ներուժը: Ակնհայտ է, որ սիրիական պետական գործիքները պարզապես ձգտում էին կարճաժամկետ կտրվածքով ընդդիմությանը ցանկացած միջոցներով հաղթել:

Պետական գործիչների և ցեղային զինյալների միջև անհասկանալի սահմանները հանգեցրել են ուղղակի բախումների պետական մարմինների և ցեղային իշխանության միջև: Հալեպում կառավարական զորքերի վերահսկողության հաստատումից ավելի քան հինգ տարի անց Արևելյան Հալեպը մինչև հիմա վերահսկվում է ցեղային զինյալների կողմից: Կառավարության վերահսկողությունը հիմնականում վերաբերում է Արևմտյան Հալեպին, և նույնիսկ այնտեղ նրա վերահսկողությունը վիճարկվել է հիմնականում արաբական ցեղերից հավաքագրված զինյալների կողմից, որոնց նա զինել է որպես հակաապստամբական ուժ: Հարկ է նշել, որ գոնե կարճաժամկետ հեռանկարում ցեղերը կվիճարկեն կենտրոնական վերահսկողության և ինքնիշխանության նկատմամբ պետության պահանջը՝ ներառյալ որոշումների կայացումն ու իրականացումը:

[69] Mazin Eiziy, alnizam walmilishiat almualiat sayuajihun sewbtan fi fk artbatihma (2017), https://bit.ly/3ttnLIz.
[70] Նույն տեղում:

Եզրակացություն

Սիրիայում պետական ատրոֆիան բերել է կառավարական հաստատությունների թուլացմանը՝ այդ թվում հանգեցնելով պետոական անվտանգության և ռազմական կարողությունների անկման: Ճգնաժամի հետևանքով պետությունն ականատես է եղել ոչ պետական դերակատարների կտրուկ աճի, որոնք փորձել են մարտահրավեր նետել պետությանը և տապալել այն, ինչի օրինակն է զինված խմբավորումների բազմազանությունը, ինչպիսիք են Սիրիական ազատ բանակը և այլն: Հակաապստամբությանը աջակցելու համար սիրիական կառավարությունը ստեղծել և վարժեցրել է կառավարամետ զինյալներ, ինչպիսիք են ազգային պաշտպանության ուժերը: Ցեղային օժանդակ մարմինները լայն տարածում են ստացել և հաճախ գիտնականների և վերլուծաբանների կողմից համարվում են խմբեր, որոնք ձևավորվում էին հաշվարկված, վերևից վար մոտեցմամբ: Այս ուսումնասիրությունը պնդում է, որ ցեղային զինյալները ներկայացնում են ցեղային խմբերի կողմից պետության թուլությունից օգուտ քաղելու փորձ՝ իրենց շրջապատի այլ ցեղային խմբերի նկատմամբ իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով: Աքդեդյանը և Հասանը պնդում են, որ Սիրիայում նոր ձևավորված ֆորմալ և ոչ պաշտոնական ցանցերը դարձել են այն կառույցների անբաժանելի մասը, որոնք հնարավորություն են տալիս պետությանը հաստատել իր իշխանությունը և վերահսկել այն:[71] Այս հոդվածում ներկայացված դեպքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես Ալ-Բաքիր բրիգադն օգնեց պետությանը վերականգնել իր իշխանությունը, բայց, իր հերթին, խումբը գործիքավորեց պետական ապարատը՝ հանուն իր հարազատների

[71] Akdedian, Harout, and Harith Hasan. “Conclusion.” In Striking from the Margins: State, Religion and Devolution of Authority in the Middle East, edited by Aziz Al-azmeh, Nadia Al-bagdadi, Harith Hasan, and Harout Akdedian. (London: Saqi Books 2021).

շահերի, օրակարգի և իշխանության: Ավելին, այս հետազոտության արդյունքները հատվում են այն հետազոտության հետ, որը Ռաֆայել Լեֆևրն անցկացրել է Լիբանանի Տրիպոլի քաղաքում զինյալ իսլամիստական շարժման վերաբերյալ: Այս հետազոտությունը վերահաստատում է Լեֆևրի ենթադրությունը, որ մարդիկ ցեղային զինյալներ են կազմում վրեժխնդրության ծարավից, փողի ձգտումից կամ որպես տեղական հակամարտություններում գերակշռելու միջոց:[72] Այս ուսումնասիրությունը չի ընդունում ցեղերի օրգանական մոդելը, որը սահմանում է դրանք որպես համահունչ, ներքին փակ համակարգեր: Ցեղերը չեն դիրքավորվում որպես միասնական մարմին, հատկապես ռազմական ոլորտում: Այս պնդումը չի նշանակում, որ ցեղերը Սիրիայում իմաստալից և ֆունկցիոնալ սոցիալական միավորներ չեն: Փոխարենը, այն ընդունում է հատուկ հյուսիսային արաբական ենթատեքստը, որը շատ լավ պարզաբանել է Մադավի ալ-Ռաշիդը, որ «ցեղը» չի նշանակում ստատիկ սոցիալ-տնտեսական խմբավորում, այլ այն, որը փոխվում է ժամանակի ընթացքում: Ինչպես ցույց է տրված այս հոդվածում, փոքր, տեղայնացված, հաճախ առաջնային, ցեղային հատվածները ավելի որոշիչ դեր են ունեցել Ալ-Բաքիր բրիգադի ստեղծման գործում, քան ամբողջ ցեղը: Ընդհանուր առմամբ, այն, ինչ մենք տեսնում ենք Սիրիայում, այնպիսի իրավիճակ է, երբ օրինապահությունն ու կարգը փոխարինվում են ցեղերի միջև կատաղի մրցակցությամբ՝ պետությունից ավելի շատ զիջումներ ստանալու և պետական ռեսուրսները գրավելու համար: Ազգայնականության նվազումը և առաջնորդությունը ցեղային խմբերին հանձնելը մեծ մտահոգություն է առաջացնում ոչ միայն Սիրիայի, այլև՝ ողջ տարածաշրջանի համար:

[72] Lefèvre, Raphaël. Jihad in the City: Militant Islam and Contentious Politics in Tripoli. (Cambridge, England: Cambridge University Press, 2021).

Գրականության ցանկ

- Abdul-Jabar, Faleh. Shaykhs and Ideologues: Detribalization and Retribalization in Iraq, 1968-1998. (Middle East Report, 2000).
- Adam, Larson. Capitol Shield Brigade Captives Video, August 2012, YouTube https://sq.ax/2Lq.
- 'Ahmad wasfi zakariaa eashayir alshaam (dimashq: dar alfikr 1945)
- Ahram, Ariel. Proxy Warriors: The Rise and Fall of State-Sponsored Militias (Stanford University Press, 2011).
- Akdedian, Harout, and Harith Hasan. “Conclusion.” In Striking from the Margins: State, Religion and Devolution of Authority in the Middle East, edited by Aziz Al-azmeh, Nadia Al-bagdadi, Harith Hasan, and Harout Akdedian. (London: Saqi Books 2021).
- Akins, Harrison. Tribal Militias and Political Legitimacy in British India and Pakistan. (Asian Security, 2020).
- Al hura, Laysat faghnar faqut.. limadha 'ansha'at rusia easharat alsharikat aleaskariat alkhasati? (2023), https://arbne.ws/3uZRM32.
- Alquds, “liwa' albaqi” almuali li'iiran yanshur altashayue wyjnnid atfalaan fi sufufih fi halab alsuwri (2020), https://bit.ly/473ekxo.
- al-Tamimi, Aymenn J. “The Local Defence Forces: Regime Auxiliary Forces in Aleppo.” (Syria Comment, 2016) https://wx.ax/g1G.
- Alwan, Fajir J. The Tribal Power in Contemporary Iraq: A Sociological Analysis. (Journal of College of Education for Women, 2020).
- Barout, Mohammed J. The Last Decade in the History of Syria: The Theory of Deadlock and Reform.” (Arab Centre for Research and Policy Studies, 2021).
- Biberman, Yelena. Gambling with Violence. (Oxford: Oxford University Press, 2019.).
- Blocq, Daniel S. The Grassroots Nature of Counterinsurgent Tribal Militia Formation: The Case of the Fertit in Southern Sudan, 1985–1989. (Journal of Eastern African Studies, 2014).
- Boutaleb, Mohammad N. The Political Aspects of the Tribal Phenomenon in Arab Societies: A Sociological Approach to the Tunisian

and Libyan Revolutions. (Arab Centre for Research & Policy Studies, 2012) https://gx.ax/n1R.

- Brenner, Robert, Agrarian Class Structure and Economic Development in Pre-Industrial Europe (Cambridge: Cambridge University Press, 1990).
- Chatty, Dawn. The Bedouin in Contemporary. Syria: The Persistence of Tribal Authority (Middle East Institute, 2010).
- Clayton, Govinda, and Andrew Thomson, Civilianizing Civil Conflict: Civilian Defense Militias and the Logic of Violence in Intra-State Conflict (International Studies Quarterly, 2016).
- Dawood, Hosham. The 'State-ization' of the Tribe and the Tribalization of the State: The Case of Iraq." In Tribes and Power: Nationalism and Ethnicity in the Middle East, edited by Faleh Abdul-Jabar and Hosham Dawood. (London: Saqi Books, 2003).
- Deirezzor24, "fadi aleafis" yaeud lilsaahat alsiyasiat bidiralzur (2021) https://bit.ly/477c5ch.
- Drysdale, Alasdair, The Asad Regime and Its Troubles (MERIP Reports, 1982).
- Dukhan H. The State and the Tribes in Syria: Informal Alliances and Conflict Patterns, (Abingdon: Routledge, 2019).
- Dukhan, H. Tribes and Tribalism in the Syrian Uprising. (Syria Studies Journal, 2014).
- Dukhan, H. Tribes of Syria: Pieces on a Chessboard? (Hate Speech International, 2016) https://nw.ax/6Kp.
- Dukhan H., Eamaar Alhamdi, shabakat alnufudh al'iiraniat almutanamiat bayn eashayir sharq suria (maehad washintan, 2021), https://bit.ly/3uTwBQ5.
- Fahad al-Eisii, dabaabatan watayaarat ahjum yal bikarat tasmim fahd albashaar (2019), https://gx.ax/2Wl.
- Haddad, Bassam. The Formation and Development of Economic Networks in Syria: Implications for Economic and Fiscal Reforms, 1986–2000 (New York: Springer, 2004).

- Hassan, Mohammed. Arab Tribes in al-Hasakah and Deir ez-Zor Choose Their Allies. (Chatham House, 2020). https://wx.ax/4Fp.
- Holden, Robert H. Armies without Nations: Public Violence and State Formation in Central America, 1821-1960. (New York: Oxford University Press, 2004).
- Jamie Allinson, The Struggle for the State in Jordan: The Social Origins of Alliances in the Middle East (Library of Middle East History, 2016).
- Jentzsch, Corinna Militias and the Dynamics of Civil Wars, PhD diss., (Yale University, 2014).
- Khalaf, Sulayman, Family, Village and the Political Party: Articulation of Social Change in Contemporary Rural Syria (Berkeley: University of California, 1981).
- Khalid alkhatib, halab:kif 'asbah "liwa' albaqir" hajar eathrat biwajh alruws? (2019 almudni), https://bit.ly/3RtTt0g.
- Khoury, Philip, and Joseph Kostiner. Introduction: Tribes and the Complexities of State Formation in the Middle East. (London: Tauris, 1991).
- Lacher, Wolfram. Libya's Fragmentation: Structure and Process in Violent Conflict. (Bloomsbury, 2020).
- Leenders, Reinoud, and Antonio Giustozzi. Outsourcing State Violence: The National Defence Force, 'Stateness' and Regime Resilience in the Syrian War. (Mediterranean Politics, 2017.)
- Lefèvre, Raphaël. Jihad in the City: Militant Islam and Contentious Politics in Tripoli. (Cambridge, England: Cambridge University Press, 2021).
- Lowe, Robert. The Syrian Kurds: A People Discovered. (London: Chatham House, 2006).
- Lund, Aron. The Non-State Militant Landscape in Syria. (Combatting Terrorism Center, 2013).
- Malmvig, Helle. Mosaics of Power: Fragmentation of the Syrian State since 2011. (DIIS Report, 2018).
- Mazin Eiziy, alnizam walmilishiat almualiat sayuajihun sewbtan fi fk artbatihma (2017), https://bit.ly/3ttnLIz.

- Mazur, Kevin. “Dayr al-Zur from Revolution to ISIS: Local Networks, Hybrid Identities, and Outside.” In Syria: Borders, Boundaries, and the State, (Basingstoke: Palgrave Macmillan, 2020).
- Pagani, Giovanni. Urban Conflicts and Multiple War Narratives: The Case of Aleppo. (Jadaliyya, 2016).
- Peic, Goran. Divide and Co-Opt: Private Agendas, Tribal Groups, and Militia Formation in Counterinsurgency Wars. (Studies in Conflict & Terrorism, 2019).
- Rae Jonathan, Tribe and Rangeland Management in Syria, PhD diss., (University of Oxford, 1999).
- Rashid al-Haji Salih, aleashayir walthawrat alsuwriata, al'adwar walamakanat (syrian society for social development, 2019), https://bit.ly/47WfHiD.
- Savelsberg, Eva. The Syrian-Kurdish Movements: Obstacles Rather than Driving Forces for Democratization (Palgrave Macmillan, 2014).
- Shamee Forever. 'iidlib, 'iielan tshikl katibat min eashirat almuali (2012) https://hq.ax/p3O.
- Suhuf Aliansab Alhashimia, asil qabilat albaqara (2016), https://sq.ax/2Cu.
- Suriatna, almilishiat al'iiraniat fi suriatun..'aedaduha wa'amakin tawazueiha (suritana, 2020), https://our-syria.com/8487/.
- The Carter Center. Syria Pro-Government Paramilitary Forces. (The Carter Center,2013), https://wx.ax/1Ih.
- Thomson, Andrew. Ethnic Conflict and Militias. (New York: Palgrave Macmillan, 2013), https://wx.ax/6Tb
- Tibi, Bassam. The Simultaneity of the Unsimultaneous: Old Tribes and Imposed Nation-States in the Modern Middle East. (London: Tauris, 1991)

THE ROLE OF THE AL-BAQIR BRIGADE IN THE SYRIAN CRISIS. RESEARCH ON TRIBAL ENGAGEMENT

Ferdinant Grigoryan
Yerevan State University

***Keywords**: Syria, tribes, Syrian crisis, tribalism, paramilitary groups, tribal militants, militias*

As a result of the situation created during the Syrian crisis, the Syrian government has increasingly relied on paramilitary groups to address security challenges. Existing studies suggest that all paramilitary groups in Syria were formed primarily through a top-down process. Focusing on the success of the al-Baqir Brigade in Syria, this study challenges that assumption. The article demonstrates that the emergence of tribal militants is largely a grassroots phenomenon, driven by competition over local resources. It argues that the Syrian state has capitalized on this opportunity by delegating certain security and counterinsurgency responsibilities to the group.